Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 19-02-2021 թ. որոշմամբ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՌԱԿ-29» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏՊԱԳՐԻՉՆԵՐԻ 9-64 չկա
1.3 Պետական գրանցման համարը		286.160.04632
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2000-05-04
1.5 ՀՎՀՀ-ն		02552232
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91212481
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.arak29.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@arak29.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Կարեն Վարագյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Հայկ Հակոբյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կարեն Վարագյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Դրամական միջոց	13092315
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
WWW.arak29.org կայքի շտեմարանների նոր ծրագրին համապատասխանեցում, կայքի թարմացում, ձևավորում	10874880	
Հետպատերազմյան ուսումնասիրություններ, հետազոտություններ, պատմա-իրավական փաստերի վերլուծություններ	8139260	
Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման նվիրված նյութերի պատրաստումներ նթարմացումներնյութերի	5357790	
Հայագիտական/բանասիրական հոդվածների անգլերեն թարգմանություններ	5086975	
Իրավունքի և տնտեսական զարգացման հետ կապված հետ կապված նոր նյութեր և օգտակար թարգմանություններ	5606480	
Դաղիվանքից եկած արցախցիներին օժանդակություն	5229600	
Օգնություն հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմին	39084000	
Օգնություն սահմանամերձ գոտուն	1100000	
Օգնություն Հայ Առաքելական եկեղեցուն	1250000	
Առողջապահական խնդիրներ ունեցող կարիքավորներին օգնություն	1850000	
Համահայկական հիմնադրամին օգնություն	1000000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	106551798	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	84578985	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 6 թերթից:

թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

ԱՈՒԴԻՏ ՍԹԱՐ ՍՊԸ 0035 ՀՀ, Երևան, Էմինեսկու 1-ին փողոց, տուն 19 ա

ՀԳԳՀ 1 21 0546, գրանցված Հայաստանի աուդիտորների
և փորձագետ հաշվապահների պալատում

www.auditstar.am
e-mail auditstar@mail.com
Հեռ (+374 10) 20 09 18 ֆաքս : (+374 10) 20 09 18 բջջ : (+374 91) 42 33 13, (+374 93) 90 61 70

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առակ-29» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին՝

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Առակ-29» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը չձևափոխված կարծիք է արտահայտել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2020 թվականի մարտի 13-ին:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար

համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման պատասխանատու գործընկերն է տնօրեն-աուդիտոր Արմեն Մելքոնյանը:

Տնօրեն-աուդիտոր՝ Արմեն Մելքոնյան

ՀՀ, ք. Երևան, Էմինեսկու 1-ին փողոց, 19ա

12 մայիսի, 2021թ.

«ԱՈՒԴԻՏ-ՍՏԱՐ»
«AUDIT-STAR»
02537739

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազար դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		-	-
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	4	237	237
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*237*	*237*
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		16	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	45,193	17,659
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ	6	-	103,900
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*45,209*	*121,559*
Ընդամենը ակտիվներ		45,446	121,796
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		-	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		237	237
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*237*	*237*
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ պարտավորություններ բյուջեի գծով	7	1,786	2,383
Եկամուտներին վերաբերող շնորհներ		43,403	119,176
Այլ կրեդիտորական պարտքեր		20	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*45,209*	*121,559*
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		45,446	121,796

Տնօրեն
Կարեն Վարագյան
16.02.2021թ

Հաշվապահ
Լիլիթ Ստեփանյան

7-17 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին Հաշվետվություն

		31.12.2020	31.12.2019
Այլ եկամուտ / կամավոր նվիրատվություն/		13,092	40,326
Այլ եկամուտ /ստացված շահաբաժին/		4,750	9,500
Փոխարժեքային տարբերություններից եկամուտ		9,454	678
Տոկոսային եկամուտներ		3,482	3529
Ընդամենը այլ եկամուտ	8	**30,778**	**54,033**
Վարչական ծախսեր			
Աշխատակիցների աշխատավարձ		(25,125)	(20,854)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(3)	(40)
Բանկային ծառայությունների գծով ծախսեր		(93)	(69)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		(600)	(600)
Վարչական այլ ծախսեր		(34)	(57)
Ընդամենը վարչական ծախսեր		**(25,855)**	**(21,620)**
Գործառնական այլ ծախսեր		(3,014)	(231)
Փոխարժեքային տարբերություններից ծախս		(785)	(1,506)
Անհատույց տրված ակտիվների գծով ծախս		(53,909)	(3,902)
Աշխատակիցներին հատուցումների գծով ծախս		(22,805)	(26,068)
Շահութահարկի գծով ծախս		(183)	(706)
Ընդամենը ծախսեր	9	**(106,551)**	**(54,033)**
Տարվա արդյունք		**0**	**0**

Տնօրեն
Կարեն Վարազյան
16.02.2021թ

Հաշվապահ
Լիլիթ Ստեփանյան

7-17 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Գործառնական գործունեությունից հոսքեր	2020թ	2019թ
Դրամական միջոցների մուտքեր նվիրատվությունից	13,092	56,116
Նյութեր, ապրանքների ձեռքբերումից	(95)	0
Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերումից	(1,138)	(943)
Վճարումներ աշխատակիցներին	(35,996)	(33,626)
Վճարումներ բյուջե	(12,886)	(13,820)
Այլ մուտքեր	450	2
Այլ ելքեր /տրամադրված օգնություն/	(53,909)	(3,902)
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	**(90,482)**	**3,827**
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Տրամադրված ավանդից տոկոսներ	1,019	2350
Ստացված շահաբաժիններ	4,750	9500
Տրամադրված փոխառության գումարի վերադարձից մուտք	111,335	-
Տրամադրված փոխառություն	-	(43,268)
Վճարված տույժեր,տուգանքներ	(-)	
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	**117,104**	**(31,418)**
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Ստացված Վարկերի և փոխառությունների մարումից	-	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր	-	-
Ընդամենը զուտ հոսքեր	**26,622**	**(27,591)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	912	247
Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին	**17,659**	**45,497**
Դրամական միջոցների մնացորդը տարեվերջին	**45,193**	**17,659**

Տնօրեն
Կարեն Վարազյան
16.02.2021թ

Հաշվապահ
Լիլիթ Ստեփանյան

7- 17 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 25.06.2021 20:29